

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ 2017Թ. ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Կոտայքի մարզի մշտական բնակչության թվաքանակը 2017թ. հուլիսի 1-ի դրությամբ կազմել է 252600 մարդ, որը հանրապետության ողջ բնակչության 8.5%-ն է, որից 137500-ը քաղաքաբնակներ են (54.4%), 115100-ը՝ գյուղաբնակներ (45.6%):

2017թ. առաջին կիսամյակում մարզում ծնվածների թիվը կազմել է 1519 մարդ կամ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ 109-ով պակաս, մահացածների թիվն ավելացել է 97-ով՝ կազմելով 1214: Բնական աճը կազմել է 305 մարդ:

Գրանցված ամուսնությունների թիվը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ պակասել է 84-ով՝ կազմելով 633, ամուսնալուծությունների թիվն ավելացել է 26-ով՝ կազմելով 153:

2017թ. առաջին կիսամյակում մարզի արտադրական ձեռնարկությունների կողմից թողարկվել է 72.7 մլրդ. դրամի արդյունաբերական արտադրանք՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 51.9 մլրդ. դրամի դիմաց կամ ծավալներն աճել են 40.0 %-ով: Այսպես, 2017թ. առաջին կիսամյակում մշակող արդյունաբերության արտադրանքի ծավալը կազմել է 40.6 մլրդ. դրամ, ինչը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավել է 8.6 մլրդ. դրամով կամ 26.8%-ով: Ընդ որում աճ գրանցվել է հիմնականում խմիչքների (68.3%), սննդամթերքի (17.2%), դեղագործական ապրանքների (77.4%), այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների (20.1%), հիմնային մետաղների (3.2%) արտադրության ճյուղերում: Հաշվետու ժամանակահատվածում էլեկտրաէներգիայի արտադրության ուղղությամբ գրանցվել է 68.6% աճ կամ արտադրվել է 30.5 մլրդ. դրամի էլեկտրաէներգիա: Իսկ հանքագործական արդյունաբերության ոլորտում գրանցվել է նվազում. արտադրության ծավալները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել են 15.4% -ով կամ արտադրվել է 1.0 մլրդ. դրամի արտադրանք:

2017թ. առաջին կիսամյակի ընթացքում մարզում արդյունաբերական արտադրանքի իրացման ծավալը կազմել է 71.1 մլրդ. դրամ՝ նախորդ տարվա 51.8 մլրդ. դրամի դիմաց կամ աճը կազմել է 37.2 %:

2017թ. հաշվետու ժամանակահատվածում արտադրանքի իրացումը ներքին շուկայում կազմել է 53.8 մլրդ. դրամ, իսկ արտահանումը՝ 17.3 մլրդ. դրամ, որից ԱՊՀ երկրներ է արտահանվել 10.0 մլրդ. դրամի և այլ երկրներ՝ 7.3 մլրդ. դրամի արտադրանք: 2017թ. առաջին կիսամյակում արտադրանքի արտահանման ծավալը 2016թ. նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 86.0 %-ով:

Մանրածախ առևտրի շրջանառության ծավալը 2017թ. առաջին կիսամյակում կազմել է 29.1 մլրդ. դրամ, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 2.5 %-ով:

Իսկ բնակչությանը մատուցած ծառայությունների ծավալը կազմել է 49.3 մլրդ. դրամ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 49.2 մլրդ. դրամի դիմաց:

Հաշվետու ժամանակահատվածում արտադրվել է 3.7 հազ. տոննա միս, ինչը 15.6%-ով ավել է նախորդ տարվա առաջին կիսամյակում արտադրվածի համեմատ: Կաթի արտադրության ծավալն ավելացել է 1.0 %-ով կամ արտադրվել է 40.3 հազ. տոննա կաթ, ձվի արտադրության ծավալը հասել է 76.5 մլն. հատի, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշի համեմատ ավել է 3.9%-ով: